

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ 2012  
ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի ՆԻՍԻՏԻ**

Մասնակցությամբ՝

ՀՀ տարածքային կառավարման նախարարի  
տեղակալ

Ա.Բախշյանի

ՀՀ տարածքային կառավարման նախարարության  
աշխատակազմի տեղական ինքնակառավարման  
վարչության համայնքային բյուջեների և ծրագրերի  
մոնիտորինգի բաժնի պետ

Խ.Մաթուլյանի

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ

Լ.Մուրադյանի  
Դ.Սամսոնյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի  
ղեկավար

Փ.Կարապետյանի

<<Քարակերտ>> ՋՕԸ-ի գործադիր տնօրեն

Տ.Ղազարյանի

<<Նոր Ակունք>> ՓԲԸ-ի տեխնիկական տնօրեն

Ա.Բաղդասարյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի  
կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

Բացակայում էին Արաքս/Արմ./, Լուկաշին և Ջրաշեն համայնքների ղեկավարները:

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ**

**1. ՀՀ Արմավիրի մարզի համայնքների սեփական եկամուտների  
հավաքագրման արդյունքները առ 01.08.2012թ. դրությամբ**

/Վ.Մկրտչյան-ՀՀ Արմավիրի մարզպետարանի  
աշխատակազմի ֆինանսական և  
սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

Մինչև օրակարգային հարցին անդրադառնալը, ՀՀ Արմավիրի մարզպետ  
Ա.Ղահրամանյանը նշեց, որ այսօր անընդունելի է համարվում սեփական  
եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշների առկայությունը, հատկապես այն

պարագայում, որ նույն Արարատյան դաշտում գտնվող Արարատի մարզն արդեն ապահովել է հավաքագրման 103 տոկոսանոց ցուցանիշ:

Օրակարգային հարցի առնչությամբ հանդես եկավ նաև ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ Ա.Բախշյանը: Նա մասնավորապես նշեց, որ Արմավիրի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշը, անշուշտ, համեմատության արդյունքում է ցածր և պետք է ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները/նաև՝ վարչական/կտրուկ կերպով այն բարձրացնելու համար: Նա միաժամանակ ընդգծեց, որ իր համոզմամբ մարզում առկա են բոլոր այն ռեսուրսները, որոնց արդյունավետ գործադրմամբ հնարավոր կլինի առաջիկայում ապահովել հավաքագրման բարձր արդյունքներ:

Օրակարգային հարցի առնչությամբ զեկուցումով հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ. Մկրտչյանը, ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքները առ 01.08.2012թ. դրությամբ: Նա ընդհանուր կարգով ներկայացրեց սեփական եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշներ, ինչպես նաև աշխատավարձերի և սոց.վճարների պարտքեր ունեցող համայնքների ցանկը և համապատասխան ցուցանիշները /կցվում է/:

ՀՀ Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը, առանձին-առանձին անդրադառնալով յուրաքանչյուր համայնքում առկա սեփական եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշներին, առաջարկեց համայնքների ղեկավարներին ներկայացնել դրանց հիմնավոր բոլոր պատճառները:

Ըստ մարզի տարածաշրջանների/Արմավիր, Էջմիածին, Բաղրամյան/ներքոհիշյալ մի շարք համայնքների ղեկավարներն առանձին-առանձին ներկայացրեցին իրենց համայնքներում հավաքագրման վիճակի վերաբերյալ իրենց հիմնավորումներն ու պարտավորվեցին, համաձայն որի՝

Արզավանդ-36.0%-Ա. Աղաջանյան՝ պարտավորվեց ապահովել 100 %  
հավաքագրման արդյունք:

Վարդանաշեն-41.3%-Ա. Մանուկյան՝ պարտավորվեց ապահովել 100 %  
հավաքագրման արդյունք:

Լենուդի-40.0%-Գ. Ղազարյան՝ պարտավորվեց ապահովել 100 %  
հավաքագրման արդյունք:

Հացիկ-46.8%-Ա. Եղիազարյան՝ պարտավորվեց ապահովել 100 %  
հավաքագրման արդյունք:

Շենավան-14.7%-Ա. Մկրտչյան՝ պարտավորվեց ապահովել 100 %  
հավաքագրման արդյունք:

Սարգարապատ-58.4%-Բ.Վարդանյան՝պարտավորվեց	ապահովել	100	%
հավաքագրման արդյունք:			
Եղեգնուտ-22.8%-Ռ.Մարգարյան՝պարտավորվեց	ապահովել	100	%
հավաքագրման արդյունք:			
Խանջյան-43.8%-Ս.Ավագյան՝պարտավորվեց	ապահովել	100	%
հավաքագրման արդյունք:			
Արագած-40.5%-Ա.Կամավոյան՝պարտավորվեց	ապահովել	100	%
հավաքագրման արդյունք:			
Արտիմետ-47.8%-Զ.Միրզախանյան՝պարտավորվեց	ապահովել	100	%
հավաքագրման արդյունք:			
Տարոնիկ-39.3%-Ա.Խաչատրյան՝պարտավորվեց	ապահովել	100	%
հավաքագրման արդյունք:			
Աղավնատուն-42.2%-Ա.Գրիգորյան՝պարտավորվեց	ապահովել	100	%
հավաքագրման արդյունք:			
Հայկաշեն-53.0%-Բ.Հովհաննիսյան՝պարտավորվեց	ապահովել	100	%
հավաքագրման արդյունք:			
Մյասնիկյան-37.3%-Ա.Պետրոսյան՝պարտավորվեց	ապահովել	100	%
հավաքագրման արդյունք:			
Դալարիկ-86.8%-Պ.Սաղաթեյան՝պարտավորվեց	ապահովել	100	%
հավաքագրման արդյունք:			
Երվանդաշատ-85.8%-Հ.Ավետիսյան՝պարտավորվեց	ապահովել	100	%
հավաքագրման արդյունք:			
Լեոնազոգ-79.0%-Ս.Մարգարյան՝պարտավորվեց	ապահովել	100	%
հավաքագրման արդյունք:			
Քարակերտ-34.9%-Մ.Հարթենյան՝պարտավորվեց	ապահովել	100	%
հավաքագրման արդյունք:			
Արգինա-43.2%-Ռ.Արոյան՝ պարտավորվեց	ապահովել	100	%
հավաքագրման արդյունք:			
Վանանդ-54.4%-Զ.Մանուկյան՝պարտավորվեց	ապահովել	100	%
հավաքագրման արդյունք:			
Բաղրամյան /Բաղր./-36.7 %-Մ.Կիրակոսյան՝ պարտավորվեց	ապահովել	100	%
հավաքագրման արդյունք:			
Կողբավան-50.8%-Հ.Քոչարյան՝պարտավորվեց	ապահովել	100	%
հավաքագրման արդյունք:			

Բագարան-64.4%-Գ.Մարգարյան՝պարտավորվեց ապահովել 100 %  
հավաքագրման արդյունք:

Տավորիկ-47.6%-Կ.Սաղաթեյան՝պարտավորվեց ապահովել 100 %  
հավաքագրման արդյունք:

Հուշակերտ-24.8%-Ս.Մխիթարյան՝պարտավորվեց ապահովել 100 %  
հավաքագրման արդյունք:

Սեփական եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշ ունեցող բոլոր համայնքների ղեկավարների կողմից ներկայացված հիմնավորումները հիմնականում վերաբերում էին 2012թ. գյուղատնտեսական տարվա ընթացքում արտադրված աննախադեպ առատ գյուղատնտեսական մթերքների /հատկապես՝դեղձ,կարտոֆիլ,ծմերուկ,պղպեղ,սեղանի տարատեսակ սորտերի խաղող/տեղական շուկաներում դանդաղ ու ցածր գներով իրացմանը,հողօգտագործողի ունեցած ինչպես առօրյա,այնպես էլ հիմնական ֆինանսական/հատկապես՝վարկային/խնդիրներին,համայնքների վարչական տարածքների որոշ հատվածներում ոռոգման ջրի անհասանելիությանը և այլն:Նշված համայնքների ղեկավարները միաժամանակ հավաստիացրին,որ անկախ ամեն ինչից, կարվի հնարավոր ամեն ինչ կտրուկ կերպով բարելավելու սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշները, դրանք հասցնելով առավելագույնի:

Ոռոգման և խմելու ջրերի մատակարարման խնդիրների առնչությամբ Արմավիրի մարզի Բաղրամյանի տարածաշրջանի համայնքների ղեկավարների կողմից արված բոլոր հարցադրումներին համապատասխան պարզաբանումներ տվեցին << Քարակերտ >> ՋՕԸ-ի գործադիր տնօրեն Ս.Ղազարյանը և << Նոր Ակունք >> ՓԲԸ-ի տեխնիկական տնօրեն Ա.Բաղդասարյանը:

**<< Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը, քննադատաբար անդրադառնալով սեփական եկամուտների հավաքագրման հարկապես ցածր ցուցանիշներ ունեցող համայնքների ղեկավարների կողմից ներկայացված տեղեկատվությանը և հիմնավորումներին, անընդունելի համարեց սեփական եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշների առկայությունը,և ընդգծեց, որ այսուհետև այլևս ոչ մի պատճառաբանություն չի կարող իրական հիմք հանդիսանալ սեփական եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշներ,ինչպես նաև աշխատավարձերի ու սոց.վճարների պարտքեր ունենալու համար: Նա միաժամանակ հավաքագրման ցածր ցուցանիշներ ունեցող համայնքների ղեկավարների ուշադրությունը հրավիրեց բարձր**

**ցուցանիշներ ապահովելու խնդրի վրա և անհրաժեշտ համարեց մինչև սեպտեմբեր ամիսը ապահովել սեփական եկամուտների հավաքագրման բարձր արդյունքներ և մարել աշխատավարձերի և սոց.վճարների գծով ունեցած պարտքերը:**

**Մարզպետը համայնքների ղեկավարներին կրկին անգամ հիշեցրեց, որ ներդրումային համապատասխան ծրագրեր կիրականացվեն մարզի միայն սեփական եկամուտների հավաքագրման բարձր արդյունքներ ապահոված համայնքներում:**

« Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը շնորհակալություն հայտնելով Արևադաշտի գյուղական համայնքի ղեկավար Հ.Օհանյանին հավաքագրման բարձր ցուցանիշներ /սեփական եկամուտներ՝108.8%,որից գույքահարկ՝116.9%,հողի հարկ՝128.3%/ ապահովելու համար,միաժամանակ մարզխորհրդի նիստին մասնակից համայնքների ղեկավարներին հավաստիացրեց,որ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում կարվի ամեն ինչ արտադրված բերքի իրացման խնդիրներին հնարավոր լուծումներ տալու համար:

Օրակարգային հարցի քննարկման ու ամփոփման ավարտից հետո « Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը շնորհակալություն հայտնեց « տարածքային կառավարման նախարարի տեղակալ Ա.Բախշյանին մարզխորհրդի նիստին մասնակցելու և մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ընդհանուր գործնթացին հնարավոր աջակցություն ցուցաբերելու համար և մարզխորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

**ՄԱՐԶՊԵՏ՝**



**Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ**

**Արձ.՝ Դ.Դավթյան**